ընդ Ձեզ չէինել այսուհետեւ 'ի քաղաքիս եւ արտաքոյ նորին վանս, եկեղեցիս, խուցս եւ խրճիթս կրօնաւորաց՝ մինչ 'ի սահմանս Իսլամաց. հիւրընկալել 'ի վանս մեր զցայգ եւ զցերեկ զԻսլամն բացեալ զդրունս նոցին իբրեւ զհիւրատանց, եւ իւրաքանչիւր նուագի կերակրել զնոսա զերիս գիշերս. չպահել զդաղտնիս յԻսլամաց և զլրտեսս 'ի տունս և յեկեղեցիս մեր. ոչ ուսուցանել զկուրանն որդւոց մերոց, չյիշել զանուն Երրորդութեան, և չհրաւիրել զոք առ այն, չլինել արդել ումեք՝ յորժամ կամովին ընկալցի զԻսլամութիւնն, յառնել յոտն կալ 'ի ժողովոց մերոց 'ի պատիւ Իսլամաց, եթէ կամիցի նա նստիլ, մի և մի իւիք լիցի մեզ նմանել նոցա, 'ի ըզգեստս, 'ի փակեղս, 'ի կոշիկս և 'ի վարս. չխօսիլ զբանս և զդաղտնիս նոցին. չնստիլ 'ի թամբեալ երիվար. չկրել զսուր եւ զայլ զէնս. չդրոշմել 'ի կնիքս դիր Արաբացի. չվաճառել զդինի և զայլ ըմպելիս. չթողուլ դանդուր 'ի ճակատս իբրեւ զարդ, որպէս յառաջն. չածել գօտի ընդ մէջ. չդնել Խաչ 'ի վերայ եկեղեցեաց մերոց եւ չհանել զայն յերեւան՝ և ոչ մի ինչ 'ի Գրոց մերոց 'ի ճանապարհս և'ի փողոցս Իսլամաց. չհարկանել կոշնակ յեկեղեցիս, բայց եթէ մեզմ և սակաւ ինչ. յուղարկաւորութեան մեռելոց չ'աղաղակել բարձր. չդնել զդերիս եւ զաղախինս, որոց յերեսս գծեալ լիցեն նշան նեռիցն այլազգեաց, և չդիտել 'ի տունս նոցին։ Զայս դաշինս եդաք ընդ ձեզ ընկալեալ զազատութիւն անձանց, ազգի և ժողովրդոց մերոց, և յերաշխի կացուցաք և զպարտիս հաւատոց մերոց. չանցանել եւ չլուծանել զիրս ինչ 'ի դաշանց աստի. և եթէ արասցէ ոք, համարեսցի նա 'ի կարգս ուխտադրուժ եւ կամակոր ազգին»։ Ընթերցաւ Օմար զգիր դաշանց Քրիստոնէից առաջի գիտնականացն Արաբացւոց, և ամենեքեան հաճեցան ընդ այն։

Ոմանք 'ի պատմագրաց յաւելուն ասել, թէ հրաման ետ Օմար Քրիստոնէից թողուլ դանդուր 'ի ճակատս, և նըստիլ յերիվար կողնակի, այլ ոչ ըստ օրինակի Իսլամաց, և ածել գօտի ընդ մէջս, բայց չվնասել զոք յայլազգեաց։ Յետ այնորիկ առին զօրավարքն զքաղաքս զայսոսիկ զԵմէս (Հոմս), զՀամայ, զԼաւոդիկէ եւ զսահմանս նոցա, զԲե-